

Թիւերը երեք երկրորդին փոխարին Օսման-
եան արժեքովը և 40149 պարտատէր
կը ներկայացնէ : Նախագահն ընդունեց
իրեն յանձնուած պաշտօնը , և յայտնեց
թէ կը յուսայ յաջողիլ :

Պաշտօնէն 14 մարտ .

Հրամանագիր մը թնդանօթածիդ զօ-
րաց երկու նոր դունդ կապելը կը հրա-
մայէ :

Հետեւ 14 մարտ .

Օսմ. քօնս .	12 3/8
Փոխ .	1865 13 1/4
"	1869 43 1/8
"	1871 27 1/2
"	1872 24 1/4
"	1873 42 3/8
"	Եղիպտ . 48
Անգլ. քօնս .	96 1/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն երեքշաբթի օրը
իւր օրդուոյ և քեռայրին հետ 25-յ-
թին Պալատէն երթալով՝ զինուոյ գոր-
ծարանները մանրամասնաբար աչքէ
անցուց և իրիկունը Տոլմա-Պաշէն
պալատը վերադարձաւ :

Սթամբուլ լրագրին խօսքին նա-
խելով , երկուշաբթի օրը Բ. Գուլ-
բունարու արտաքին կարգի ժա-
ղովը Գալատաղցոյ չափազանց պա-
հանջումները մերժելու որոշում ար-
ւել է , և այս որոշումը նոյն իրի-
կունը Վեհ. Սուլթանին հաւանու-
թիւնն ստացանք է :

Կերէի որ , կըսէ յիշեալ լրագրի-
րը , Գալատաղի պատուիրակները շա-
բաթ օրը պիտի մեկնին մայրաքա-
ղաքէն :

Անցեալ շաբաթ Կ. Պոլսոյ քանի
մը կողմերը պատերուն վրայ փակած
խռովայնոյ յայտարարութիւններ տես-
նուած ըլլալով , Վազըթ լրագիրը կը-
սէ թէ անցեալներն աստիճանազուրկ
ըլլալով տէրութեան այլ և այլ դա-
ւառներն արտօրեալ անձանց ազգա-
կաններուն գործն էին :

Բ. Գուլբ. Պ. Պէյքըր անուն Անգ-
ղիացի զինգուպիսին յանձնէր էր Օս-
մանեան ոստիկանութեան ներկայ
կանոններն ու արտօնադրութեան
ձևը քննել և հարկ եղած բարենո-
րոգումները գրի առնելով Բ. Գրան
ներկայացնել :

Պ. Պէյքըր այ խնդիրը լրջաբար
քննելէ ետեւ տեղեկագիր մը ներկա-
յացուց , որոյ մէջ հետեւեալ հինգ
գլխաւոր կէտերը կառաջարկէ .

1. Ոստիկանութիւնն ու զինուո-
րութիւնն իրարմէ բաժնել :

2. Կրթութեան վարժոյ մը բա-
նալ ոստիկանութեան զինուորացի հա-
մար , որպէս զի իրենց պաշտօնն ու
պարտականութիւնները սովորին :

3. Սպայից պարտականութիւն-
ներն յատուկ գործընկի մը մէջ նշա-
նակուին , և իւրաքանչիւր սպայ այն
գործընկէն հաւաքուի թիւ ունենա-
լով , ամեն պարագայի մէջ անոր հը-
րաձանդաց համաձայնի :

4. Ամեն կուսակալութեանց մէջ
ոստիկան զինուորացի պահեստի գուն-
դեր կազմել , որք արտաքին կարգի
պարագայից մէջ Պաշտօն-պաշտօն-
ութեան տեղը գործածուին :

5. Տեսուչներ անուանել , որք գա-
ւառները պարտելով զինուորական
զօրութեան պաշտօնավարութեանը
վրայ մանրամասն տեղեկութիւններ
բերեն կեդրոնական իշխանութեան :

Կը լսենք թէ հեռագրական պաշ-
տօնեաներն իրենց գործը դադ-
րեցուցած են քանի մ'օրէ ի վեր ,
և իրենց պաշտօնական եղով Շահին է-
ֆէնտի անուն պաշտօնակցին վերա-
հաստատութիւնն և ըստման անո-
րէն Սուլթանի էֆէնտիի պաշտօ-
նակցութիւնը կը պահանջեն : Այս
վերջինը ծանր հայհոյութիւնները
բերէ յիշեալ բողոքարկու պաշտօ-
նէից :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

2 մարտ չորեքշաբթի իրիկուն 1239

3 մարտ հինգշաբթի առաւօտ	43.44
Բոսնիական լիւր	43.
Բոսնիական լիւր	36
Թիւրքական լիւր	163 20

ԲՆԹԱՅԻ ԱՐԺԵՐՊՈՅ

Կ. Պոլսոյ 2 Մարտ

Ստիւթէ Դէնթրալի բաժ. Անգլ. լիւր .	3, 2
" ֆոխանտիւթեան "	2.45
Կ. Պոլսոյ Պաշտօնի "	3.10
Քրէտի Դէնթրալ "	2, 5
Քրէտի Օսթրո-Թիւրք "	—
Փոխ .	1863 70
"	1865 72
"	1869 63
"	1872 24
"	1873 64
Թրամուայ Օսմ. լիւր .	1 45

ԲՆԹԱՅԻ ԴԻՍԿՈՅ

2 Մարտ

Անգլ. լիւր .	440
Նարոյէն ոսկի "	87 20
Իմպերիալ Ռուս "	89 20
Գըրման "	54 20
Հինգ ֆրանկ "	—
Հինգ նոյ "	113
Պղինձ "	165

ԱԶԳԱՅԻՆ

Կը լսենք թէ կիրակի օրը Ղալա-
թիոյ խմբակին գլխաւոր անդամնե-
րէն իշխման Գեր. Մատթէոս Ե-
պիսկոպոսն իւսկիւտարու Սեւմիէ
թաղը բացուած լսարանին մէջ առե-
նախօսելով՝ սահմանադրական ժողո-
վրդեան մը պարտականութիւններն
ուսուցած առեւն յայտարարեց թէ
Ժողովուրդը պարտական է վարչու-
թեան որոշմանց հնազանդելու երբոր
Սահմանադրութեան համաձայն գը-
նէ . իսկ եթէ չգտնէ , պէտք չէ հը-
նազանդել :

Ահաւասիկ վարդապետութիւն մը՝
որ ազգը պարզապէս յանիշխանու-
թիւն կառաջնորդէ : Սահմանադրա-
կան ազգաց մէջ ժողովուրդն՝ ոչ թէ
ուղղապէս՝ այլ իւր ընտրած երես-
փոխանութեան միջոցաւ կը հսկէ վար-
չութեան գործը վրայ , առանց բը-
նաւ միջամտելու . երբոր վարչու-
թիւնը սխալ քայլ մ'առնու , համա-
րառու մարմնոյն՝ այն է երեսփոխա-
նական ժողովոյ միայն կը պատկանի
յուզղութիւն հրաւիրել զայն կամ ամ-
բաստանութեան ենթարկել : Իսկ
Ժողովուրդը միշտ պարտական է յար-
գել վարչութեան որոշումն , իրեւ
սահմանադրութեան կազմուած ազգային
գործադիր իշխանութեան տնօրէնու-
թիւն , որոյ միակ ուժն ու գործադ-
րութիւնը Ժողովուրդեան յարգանաց
ու կամաւոր հնազանդութեան մէջ
կը կայանայ :

Գեր. Իզմիրեանի քարոզած սկզբ-
բունքը սահմանադրական սկզբունց
պարզապէս ժխտուած է : Անշուշտ այս
ձախօծ սկզբունքն է որ Ղալաթիոյ իւր-
բանի բոյն եղով Ղալաթիոյ հակա-
սահմանադրական թաղ. խորհուրդն
այ ինչպէս կը լսենք՝ վարչութեան ո-
րոշմանը դէմ՝ հետեւեալ խորհուրդ-
կը ներկէ :

Անշուշտ գիտեն ընթերցողք թէ
Ղալաթիոյ Թաղական խորհուրդ պաշ-
տօնը վարչութեան կողմէ ուղղապէս
կարգեալ քանի մ'անձանց յանձնը-
ւած էր առժամանակեայ կերպիւ :
Այս անգամ վարչութիւնն յիշեալ
անձանց տեղ ուրիշ անձինք նշանա-
կելով , երբոր իր որոշումը կը հաղոր-
դէ նախորդներուն , անոնք՝ Ղալա-
թիոյ խմբակին անդամնց թելադրու-
թեամբ վարչութեան տնօրէնութեա-
նը դէմ՝ կենտրոն հնարք կը խորհին
եզեր՝ իշխման քահանայապետին
քարոզած վերոյիշեալ խռովայնոյ
վարդապետութեան յիշելով :

Տեսնենք թէ վարչութիւնն և
նորա նախագահ Ամեն . Ս. Պատրի-
արք հայրը տակաւին թղթաւորութիւն
պիտի ընեն այս անիշխանական քա-
րոզութեանց և գործոց , որոյ հեղի-

նակներն իրենց անպատիժ մնալէն
քաջալերուելով՝ օր քան զօր յանդը-
նու թիւեր կաւեցնեն :

Զմուռնիոյ նորընտիր առաջնորդ-
Գեր. Տ. Մեղիսեպեկ Ծ. վարդապե-
տն երէկ իտալական շոգենաւով
մեկնեցաւ յիշմիր :

Կը լսենք թէ Ամեն . Խորիմեան
սրբազան մինչև շոգենաւ ուղեկից
գնացել է Գեր. Մուրադեանի , որ
ինչպէս ամեն ողջամիտ և յառաջ-
գիւմատէր ազգայնոց՝ նոյնպէս և Ն.
Սրբազնութեան սէրն ու համարումը
գրաւած է իւր հմուտ թեմին և
առաքինախոյլ վարուք :

Կարին 10 փետր. 1877

... Խմբագրապետ .

Թիւ 1146 փետր. լրագրոյն մէջ՝
Կարինէն յունի. 13 թուով գրուած
նամակի մէկ տեղեկութիւնը կիմա-
ցընէ , որպէս թէ ստորագրեալ Վ.
Լուսաւորչի վանքի վանահայրը Հինձ.
գիւղէն թուանջ ինչեւր ժամանակ
աւագակաց ձեռք ինչեւր մերկա-
ցուցած գանակած են , և հիւանդա-
նաւով հիմայ անկողնոյ կը ծառայէ :

Տէր Խմբագրապետ , վերոյիշեալ
դէպք ոչ մեր անցելոյն և ոչ ներ-
կայիս մեզի հանդիպած է բնաւ եր-
բէք :

Այդ դէպքի տեղեկութիւնը մե-
զի համար դուր , սխալ և միանգա-
ւայն անհիմն է . ասոր ապացոյց մըն
ալ այս է որ մինչև եւրօսիական ժողո-
վոյ պաշտօնիւ չաբաթի երկու ան-
գամ Կարինոյ յիշխման պատման ևս
գտնուած եմք և կրկին անտես եմք
յայտնող նոյն նամակագրին , որ ջրոյ
նշանը անգամ չտեսած՝ բոլորեց է
անմտաբար՝ և սեւագէմ ոգւով սը-
տուութեան ծառայեց է : Աստուած
դարձ տայ այնպիսի ոգւոյ :

Նամակագրին երկրորդ լուրը կի-
մայնէ թէ Ծննդեան ութօրէից վեր-
ջին օրը ի մէջ եկեղեցւոյ տեղի հա-
մար կանանց մէջ աղմուկ ծեծ բը-
ղեր՝ ժամերգութիւն խափանելու
և եկեղեցւոյ գաւթէն ժողովուրդը ցը-
ւելու համար ոստիկանի միջամտու-
թիւն հարկ եղեր :

Ի պաշտօնէ ունիմ յայտնել թէ ար-
գարեւ նոյն օրը կանանց համար յա-
կացեալ հանգիստ որ պատարագ մա-
տուցաւ , բայց յիշեալ անփայլի դէպ-
քերուն պատահիլը սխալ և միանգամ
սուտ է :

Ըստ Ս. Կոյման մերոյ՝ բանին ըս-
տոյցը ինքնագիր նամակաւ յայտ-
նեցի ձեզ , ինչորեւից որ շնորհ ընէք
ձեր պատուական լրագրոյն մէջ հը-
րատարակել ի սէր և ի լուր ճշմար-
տութեան : Մնալով ճշմարտապէս
ազգասիրեք բարեմաղթու
Ներսէս վրդպ. Ս. Սարգսեան
Վանահայր Լուսաւորչի վա-
նուց Կարնոյ

ՊՇԵՏՈՒՆԱԿ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱԶԳ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԽՈՐՀԱՐԴՈՅ

Գանալիլի թաղային անտեկին
յիսուն և ութ ամսեայ հաշուեցոյցը՝
որ կ'սկսի 1872 ապրիլ 1 է և կը յա-
գի ցվեր յունիսի ներկայ 1877
աւարտ , թաղական խորհուրդ կողմէ
ըստ օրինի Տեսու . խորհուրդ ներ-
կայացուած , և անոր յարեւման մէկ
օրինակը յիշեալ թաղի եկեղեցւոյ
բակին ի տես թաղեցւոյ կախուած
են :

Տեսու . խորհուրդն այսու պաշ-
տօնական ծանուցմամբ հրաւեր կը
կարգայ Պատուարժան թաղեցւոյ , որ

յիշեալ հաշուեցոյցին վրայ որ և է
բողոք կամ դիտողութիւն , եթէ ու-
նին , թուականն մինչև քսան և մէկ
օր գրաւոր կերպիւ ներկայացնեն
Տեսու . խորհուրդ :

Հետեւապէս սոյն պայմանաժամին
լրանալէն ետք՝ որ և է բողոք կամ
դիտողութիւն անխելի պիտի մնայ :

21 փետրվար 1877

Ի Պատրիարքարանի Հայոց (Կնէ)

Կ. Պոլսոյ

... Խմբագիր .

Կը խնդրեմ որ բարեհաճիք սոյն
ազգ. ձեռ պատուական թերթին մէջ
գետեղելու :

Թաղիս երեսփոխաններէն մին հը-
րատարեալ ինչեւր՝ ըստ հրահանգի
Ամեն . Սրբազան Պատրիարք հօր ,
ընտրողական ժողովու գումարեւով ,
ընտրողաց դիւրութիւն ընծայելու
համար ընտրելի նշանակեց հետեւեալ
երեք անձինք :

Թէրթանեան Թաղէտ Էֆէնտի
Ֆատուլաճեան ,
Սարգիսեան Մ. Յակոբ :

Ընտրողք տղատ են յիշեալ ան-
ձերէն զատ ուրիշներու ալ քուէ տալու
Ուստի ընտրողական ժողովու կը
խնդրէ պատուարժան թաղեցիներէն
որ բարեհաճին յառաջիկայ կիւրա-
կէ օր մարտ 5 , ժամը 3-ին մինչև 7
անպատճառ իրենց քուէները ան-
ձամբ կամ նամակաւ բերելու և քը-
ւէտուիլը ձգելու , որ եկեղեցւոյ բան-
կալը կը կենայ :

27 փետր. 1877 Նախագահ
Պալատ Ընտրող. ժողովոյ
Խորէն Եղեւ. Մեղիսեպեկ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍԻՍ ԺԹ .

25 Փետրվար 1877

ՆԱԽԱԳԱՀ—Տ. Խորէն Սեփաճեան Նախ. Պէյ
(առժամայն) .

ԱՏԵՆԱՊԵՏ—Սեփաճեան Ժառ. Աւանտ .

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Տեղեկագիր Դաստիարակութեան Գէ-
տնի ի վերայ Դաստիարակութեան խորհուրդ :
Բ. վերաբնութեան Սահմանադրութեան .
— Ծառաւորութեան յորտառայ լուսնա-
ժառանգութեան՝ յերկրորդ ընթերցման :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԷ

Ատեանը բացուեցաւ ժամն 7 1/2 ին
ի ներկայութեան 40 երեսփոխանաց , ու-
րոց վերջին թիւը յանգեցաւ 75 ի :

Ամենապատիւ Արքայան Պատրիարք
Հօր բացակայութեան պատճառաւ , ներ-
կայ եկեղեցական երեսփոխանաց աստի-
ճանաւ երկրպագոյն Տ. Խորէն Նախ-Պէյ
Արքայան հրաւիրուեցաւ նախագահել այ-
սօրեայ նստին :

Նոյնպէս Ատեանակալ Էֆէնտիներուն
բացակայութեան պատճառաւ , կրտսե-
րազոյն երեսփոխաններէն Մեղիսեպեկ Մը-
կըմիշ Էֆէնտի հրաւիրուեցաւ յաւոր-
եայ ատենադպրութիւն :

1.

Ընթերցման ժ. 2. Նախ. Ատենադպրութեան

Ատենադպրութեան փառան հրաւիրեց երես-
փոխաններն ի գիտողութիւն թ. 2. նստի
ատենադպրութեան վրայ , և տեսնելով որ
գիտողութիւն ընող չկայ , քուէի դրաւ
պայն՝ որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՄԷ
ՅԱԼ Ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը խնդրէ ժողովին
որ վերջին օրերու ատենադպրութեանց տը-

